

ԼԻԶԵՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մ. Ն. ՀԵՐԱՆՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ա. Գ. ՄԱՋՄԱՆՅԱՆ

ԳԴՀ բակալավրի ֆինանսներ բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի

Լիզինգային գործարքները զարգացած երկրների տնտեսությունների անբաժանելի մասն են: Աշխարհի շատ երկրներում ներդրումային գործունեության ոլորտում լիզինգային գործարքների օգտագործման բազմամյա փորձը վկայում է դրա արդյունավետության մասին: Հատկապես արտադրական գործընթաց կազմակերպելիս անխուսափելի է հիմնական միջոցների ձեռքբերման հարցը: Ներկայումս տվյալ խնդրի լուծման լայն տարածում ստացած ուղիներից են վարկային միջոցների ներգրավումը և ֆինանսական վարձակալության (լիզինգի) միջոցով սարքավորումների ստացումը: Հարկ է նշել, որ շուկայական տնտեսության պայմաններում վարկային միջոցների ներգրավման համեմատությամբ լիզինգն ավելի արդյունավետ գործառնություն է: Լիզինգն իբրև ֆինանսավորման նոր ձև՝ ունի որոշակի առանձնահատկություններ և դիտարկվում է որպես ավանդական բանկային վարկավորման այլընտրանքային միջոց: Որպես տնտեսագիտական կատեգորիա՝ լիզինգ բառն ունի անգլերեն ծագում (leasing), որը նշանակում է վարձակալություն: Լիզինգը հիմնված է սեփականության իրավունքի մասնատման վրա, որի էությունը տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավունքներն են: Լիզինգը ժամանակավորապես ազատ կամ ներգրավված ֆինանսական միջոցների ներդրումն է, որի դեպքում լիզինգատուն պարտավորվում է որպես սեփականություն ձեռք բերել պայմանագրով նախատեսված գույքը նշված արտադրողից և հատկացնել այդ գույքը լիզինգառուին որոշակի վճարի դիմաց՝ հետագայում գնելու իրավունքով:

Լիզինգն արտադրական նշանակության կառույցների, տրանսպորտային միջոցների, մեքենաների, սարքավորումների երկարաժամկետ վարձակալությունն է: Այն ներդրումների ֆինանսավորման և իրացման ակտիվացման համեմատաբար նոր եղանակ է՝ հիմնված ապրանքների նկատմամբ վարձատուի սեփականության իրավունքի պահպանման վրա: Լիզինգային գործառնություններն իրագործվում են ոչ միայն մասնագիտացված ընկերությունների, այլև խոշոր առևտրային բանկերի կողմից: Լիզինգը հնարավորություն է ընձեռնում ստանալու անհրաժեշտ սարքավորումներ՝ առանց զգալի դրամական միջոցների միանվագ ծախսման, որն անխուսափելի է սովորական գնման ժամանակ¹:

Լիզինգին բնորոշ են հետևյալ գործառնությունները.

- Այն հանդես է գալիս իբրև հիմնական ֆոնդերի մեջ միջոցների ներդրման յուրահատուկ ձև, ֆինանսավորման ավանդական ուղիների լրացում: Լիզինգ

¹ Գ. Կիրակոսյան, Հ. Ղուլչյան, Ի. Տիգրանյան, «Տնտեսագիտական բացատրական բառարան», Երևան, 1999, էջ 176:

ստացող ձեռնարկությունը հնարավորություն ունի տվյալ պահին օգտվել իրեն անհրաժեշտ գույքից՝ առանց սեփական միջոցներն այդ նպատակով կենտրոնացնելու: Լիզինգային գործարքների ժամանակ գույքի արժեքն ամբողջությամբ չի վճարվում, որով և այն տարբերվում է ապրանքների առք ու վաճառքից:

- Լիզինգի հիմնական առավելություններից է վճարումների իրականացման կարգը: Մի կողմից, վճարումների ժամկետներն ու չափը հանդիսանում են կողմերի փոխադարձ պայմանավորվածության առարկա, որի դեպքում հաշվի են առնվում յուրաքանչյուր կողմի շահերը: Մյուս կողմից, լիզինգային վճարումները կարող են իրականացվել այն դեպքում, երբ այդ սարքավորումներով թողարկած ապրանքատեսակները վաճառվել են, և ձևավորվել է որոշակի հասույթ: Այս պարագայում վճարումներն ամբողջությամբ կամ մասնակիորեն կարող են արտահայտվել ապրանքների տեսքով կամ կրել դրամական բնույթ:

- Լիզինգը հանդիսանում է արտադրության նյութատեխնիկական ապահովման առավել առաջադիմական մեթոդ, որն օգտագործողին հնարավորություն է տալիս ներթափանցելու առաջավոր տեխնիկայի և տեխնոլոգիայի բնագավառ:

- Պայմանագրի գործողության ընթացքում լիզինգը թույլ է տալիս ծանոթանալու սարքավորման գործունեությանը, այն փորձելու արտադրության գործընթացում, ապա ներկայացվող պահանջներին համապատասխանելու դեպքում այն ձեռք բերել որպես սեփականություն՝ հաշվի առնելով տրված վարձավճարները:

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում լիզինգն օրենսդրորեն առաջին անգամ սահմանվել է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով: Լիզինգային հարաբերությունները կարգավորող իրավական այս փաստաթուղթը բացահայտում է այն խոչընդոտները, որոնք կարող են առաջանալ լիզինգային գործառնություններ իրականացնելիս, և առաջադրում են խնդիրներ կախված լիզինգի արդյունավետ կիրառման գործնական անհրաժեշտությունից:

Որպեսզի գործարքը համապատասխանի ֆինանսական լիզինգի պայմաններին, այն պետք է բնութագրվի հետևյալ հատկանիշներով².

- լիզինգատուի կողմից լիզինգի առարկայում ունեցած ներդրումը պետք է լինի 20%-ից ոչ պակաս,

- լիզինգառուն իրավունք չունի սարքավորում գնելու ավելի ցածր գնով, քան դրա շուկայական գինն է այդ իրավունքն իրականացնելու պահին,

- լիզինգառուն իրավունք չունի ներդրում կատարել վարձակալված սարքավորման մեջ, բացառությամբ որոշ բարելավումներ կատարելը,

- լիզինգի ժամկետը չպետք է գերազանցի սարքավորման ծառայության ժամկետի 80%-ը,

- լիզինգային պայմանագրի վերջում սարքավորման մնացորդային արժեքը չպետք է ցածր լինի սկզբնական արժեքի 20%-ից,

- լիզինգային պայմանագրի համաձայն՝ լիզինգատուն պետք է ակնկալի ոչ միայն եկամտի ստացում՝ անկախ հարկային արտոնություններից, այլև՝ դրամական հոսքերի դրական մեծություն:

ՀՀ-ում լիզինգային գործառնություններ են իրականացնում «ԱԳԲԱ Լիզինգ»,

² Գ. Կիրակոսյան, Հ. Ղուլչյան, Ի. Տիգրանյան, «Տնտեսագիտական բացատրական բառարան», Երևան, 1999, էջ 176:

«Ագրոլիզինգ», «Քարդ ԱգրոԿրեդիտ», «Յունիլիզինգ», «Նոր Հորիզոն», «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» վարկային կազմակերպությունները: Նշենք, որ լիզինգային գործառնություններ են իրականացնում նաև Հայաստանյան Արարատբանկը, Ամերիաբանկը, Հայբիզնեսբանկը և Կոնվերս Բանկը³:

ՀՀ լիզինգային շուկայի առավել ակտիվ մասնակիցը «ԱԳԲԱ Լիզինգ» ընկերությունն է, որը հանդիսանում է ՀՀ-ում առաջին գրանցված լիզինգային կազմակերպությունը: 01.01.2012թ.-ին կազմակերպության լիզինգային գույտ ներդրումները կազմել են 4.6 մլրդ դրամ, որից 1.9 մլրդ դրամը բաժին է ընկնում տրանսպորտին, 0.78 մլրդ դրամը՝ առևտրին, իսկ 0.73 մլրդ դրամը՝ արդյունաբերությանը⁴: Ընդ որում՝ վարկային կազմակերպության լիզինգային գործառնությունների գծով հաճախորդների կազմում գերակշռում են մասնավոր ձեռնարկությունները, որոնց տրամադրված լիզինգի ծավալը 2011թ.-ի տարեվերջին կազմել է շուրջ 4 մլրդ դրամ, իսկ անհատ ձեռնարկատերերին տրամադրված լիզինգային պորտֆելի ծավալը՝ շուրջ 300 մլն դրամ:

Չնայած լիզինգային հարաբերությունները ՀՀ-ում վերջին տարիներին նեոզարգացում են ապրում, սակայն ՀՀ լիզինգային շուկան աչքի է ընկնում խիստ սահմանափակ ծավալներով, որոնք պայմանավորված են ոլորտի օրենսդրական դաշտի, ինչպես նաև համապատասխան ինստիտուցիոնալ կառուցվածքի թերզարգացմամբ, ապահովագրական շուկայի գրեթե բացակայությամբ: 01.01.2012թ. դրությամբ բանկերի կողմից իրականացվող լիզինգային գործառնությունների ծավալը չի գերազանցել բանկային համակարգի ընդհանուր ակտիվների 1%-ը: Վարկային կազմակերպությունների պարագայում նույն ցուցանիշը կազմում է շուրջ 5,2%: Ընդհանուր առմամբ, ուսումնասիրվող ժամանակաշրջանում վարկային կազմակերպությունների լիզինգային պորտֆելը կազմել է 4.8 մլրդ դրամ⁵: Սակայն նշենք, որ ՀՀ-ում լիզինգային գործառնությունների ծավալը մեծանում է: Մասնավորապես Ամերիաբանկը 2012թ.-ի առաջին եռամսյակում ապահովել է լիզինգային գործառնությունների 85% աճ՝ կազմելով շուրջ 3,4 մլրդ դրամ: Ընդ որում՝ տվյալ ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 109%-ով⁶:

Չնայած վերոնշյալին, վերլուծությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում լիզինգի զարգացումն արգելակող խոչընդոտներն են.

- ոլորտը կանոնակարգող թերի օրենսդրական դաշտը,
- ֆինանսական կազմակերպությունների ֆինանսավորման փորձի և լիզինգի վերաբերյալ տեղեկատվության պակասը,
- երկարաժամկետ ֆինանսական ռեսուրսների սակավությունը,
- ապահովագրական շուկայի թերզարգացած մակարդակը և այլն:

Հարկ է նաև նշել, որ առևտրային բանկերը նախապատվությունը տալիս են կարճաժամկետ ռեսուրսների ներդրմանը և շատ զգուշությամբ են իրենց ռեսուրսներն օգտագործում երկարաժամկետ նախագծերի ֆինանսավորման հա-

³ <http://www.finance.am>

⁴ www.acbaleasing.am

⁵ ՀՀ ԿԲ 2010թ. վիճակագրական տեղեկագիր, էջ 80, 86 (www.cba.am):

⁶ <http://www.armbanks.am>

մար: Բանկերը նախընտրում են իրենց հաճախորդների նախագծերը ֆինանսավորել վարկերի, այլ ոչ թե լիզինգի միջոցով, ինչը պայմանավորված է լիզինգային գործարքների բացակայությամբ: Փոքր և միջին ձեռնարկությունները լիզինգի փոխարեն նախընտրում են օգտագործել բանկային վարկերը, քանի որ գերադասում են չապահովագրել լիզինգային թանկ ծառայություններ, խուսափում են բոլոր հնարավոր գրանցումներից, որոնք կարող են առաջանալ լիզինգային գործարքներն իրականացնելիս:

Բազմաթիվ երկրների ձեռնարկատիրական գործունեության բնագավառում լիզինգային մեխանիզմների կիրառման փորձը վկայում է լիզինգային գործառնությունների արդյունավետության և օգտակարության մասին՝ հատկապես գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտներում: Լիզինգի զարգացման արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը նախանշում է այն անհրաժեշտ պայմանները, որոնք նախադրյալներ կստեղծեն, որպեսզի լիզինգը խթանի տնտեսության ներդրումային գործընթացների զարգացմանը: Դրանք են.

- իրավական հիմքը,
- նորմատիվային հիմքը,
- հարկային ռեժիմը,
- հաշվապահական հաշվառումը⁷:

Ուսումնասիրությունները վկայում են, որ առանց համապատասխան իրավական դաշտի լիզինգային ծառայությունների շուկան չի կարող արդյունավետորեն զարգանալ: Լիզինգի մասին օրենքը պետք է հստակորեն սահմանի լիզինգային գործարքի կառուցվածքը, մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները: Լիզինգատուի սնանկացման դեպքում օրենքը պետք է պաշտպանի լիզինգի առարկայի նկատմամբ լիզինգատուի սեփականության իրավունքներն այլ կազմակերպություն վարկատուների հայցապահանջներից:

Առաջատար երկրների փորձը ցույց է տալիս, որ լիզինգի զարգացմանն էականորեն կարող են նպաստել հարկային արտորոնությունները, որոնցից է արագացված ամորտիզացիան: Լիզինգատուի համար նպատակահարմար է կիրառել արագացված ամորտիզացիան, քանի որ այն հնարավորություն է տալիս փոքրացնելու հարկման ենթակա բազան: Այս պարագայում հարկային խնայողություններն իրենց հերթին թույլ կտան նվազեցնելու վարձավճարները: Բացի այդ, արագացված ամորտիզացիայի շնորհիվ լիզինգառուն պայմանագրի վերջում սարքավորումը գնելիս վճարում է աննշան մնացորդային արժեք:

Բազմաթիվ երկրներում գործում է ներդրումային զեղչը, որը տրամադրվում է կազմակերպություններին՝ նոր կապիտալ ներդրումների նկատմամբ որոշակի տոկոսային հարաբերակցությամբ: Այս առումով լիզինգի առավելություններից օգտվելու համար հաճախորդը նախ և առաջ պետք է օրինականացնի իր բիզնեսը և կատարի հարկային պարտավորությունները: Նման արտոնությունների տրամադրումը ձեռնարկություններին հնարավորություն կտա նվազեցնել հարկվող բազան, այնուհետև խնայված դրամն օգտագործել արտադրության ընդլայնման նպատակով: Այսպիսի առավելություններ ունեցող լիզինգը սկսնակ ձեռներեցներին հնարավորություններ կտա ոչ միայն դիմակայելու մրցակցությանը, այլև նորացնելու արտադրությունը, զարգացնելու մրցունակ արտադրանքի թո-

⁷ www.cfcrus.ru(ПИННГ)

ղարկումը, հետևաբար՝ իրենց գործունեությամբ նպաստելու պետական բյուջեի հարկային մուտքերի համալրմանն ու ավելացմանը:

Լիզինգային գործառնություններ իրականացնելիս կարևորվում է ֆինանսական երաշխիքների ապահովումը, որն անմիջապես կախված է կոնկրետ գործարքի ընդհանուր առևտրային ռիսկի չափից: Այդ պատճառով լիզինգային պայմանագրերի կնքման ժամանակ անհրաժեշտ է մեծ ուշադրություն հատկացնել լիզինգային գույքի ապահովագրության հարցին, որն իրագործում է լիզինգառուն՝ հոգուտ լիզինգատուի: Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում բացակայում է լիզինգառուի կողմից վարձավճարների ոչ պատշաճ վճարման ռիսկից ապահովագրման համակարգը:

Այսպիսով, ՀՀ լիզինգային ծառայությունների շուկայում առկա են մի շարք գործոններ, որոնք խոչընդոտում են ՀՀ-ում լիզինգի զարգացմանը: Դրանք են.

- լիզինգային հարաբերությունները կարգավորող ամբողջական իրավական համակարգի բացակայությունը,

- հարկային և մաքսային արտոնությունների բացակայությունը (միայն վերջերս ԱԱՀ-ից ազատվեցին վարձավճարները և այն ներմուծվող սարքավորումների լիզինգը, որոնց համար ներմուծման ժամանակ գանձվում է 0% ԱԱՀ),

- սկզբնական կապիտալի անբավարարությունը և լիզինգային ընկերությունների ֆինանսական թուլությունը,

- լիզինգի էության, նրա արժանիքների անբավարար ճանաչումը,

- լիզինգի մասին տեղեկատվության ապահովման համակարգի բացակայությունը,

- լիզինգային ընկերությունների համար որակյալ և փորձառու կադրերի անբավարար մակարդակը,

- ազգային վարկային ռեսուրսների բարձր արժեքը,

- սարքավորումների երկրորդային շուկայի բացակայությունը,

- երաշխիքների և խոշոր կանխավճարների (20-50%) անհրաժեշտությունը:

Զնայած վերոնշյալ հանգամանքներին՝ ՀՀ-ում լիզինգային գործունեության զարգացումը դիտվում է որպես հիմնական կապիտալի ձեռքբերման արդյունավետ ձև: Հատկապես այն դեպքում, երբ կազմակերպությունները խոշոր կապիտալ ներդրումներ կատարելու համար ֆինանսական միջոցների սուր պահանջարկ են զգում, անխուսափելի է դառնում լիզինգային բիզնեսի դերի բարձրացման անհրաժեշտությունը: Ուստի անհրաժեշտ է ստեղծել լիզինգային գործունեության ծավալման բարենպաստ պայմաններ, որոնք ոչ միայն կհանգեցնեն լիզինգային ընկերությունների թվի ավելացմանը, այլև կնպաստեն վերջիններիս գործունեության շրջանակների ընդլայնմանը և կապահովեն օտարերկրյա լիզինգային ընկերությունների մուտքը տեղական շուկա: Լիզինգային ընկերությունների գործունեությունը պետք է հիմնված լինի որոշակի սկզբունքների վրա՝ նպատակայնություն, զրավի անհրաժեշտության բացակայություն, երկարաժամկետ բնույթ, ճկունություն և միջոցների մատչելիություն:

Այսպիսով, լիզինգը որպես հեռանկարային ներդրումային գործիք կարող է նպաստել արտադրության և ծառայությունների ոլորտում ձեռնարկատիրական գործունեության արդյունավետության բարձրացմանը և արտադրական բազայի նորացմանը, որը նախադրյալներ կստեղծի փոքր և միջին բիզնեսի զարգացման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Բալադյան Ա. Դ.** «Ֆինանսա-վիճակագրական բացատրական բառարան», Երևան, 2008:
2. **Բալադյան Ա. Դ.**, «Ֆինանսական վերլուծություն», Երևան, 2009:
3. **Կիրակոսյան Գ., Ղուշյան Դ., Տիգրանյան Ի.**, «Տնտեսագիտական բացատրական բառարան», Երևան, 1999:
4. ԶԶ Քաղաքացիական օրենսգիրք, Երևան, 1998:
5. **Лапыгин Ю. Н., Сокольников Е. В.** “Лизинг”, Москва, 2005.
6. **Райзберг Б. А., Лозовский Л. Ш., Стародуцева Е. Б.** “Современный экономический словарь”, Москва, 2001.
7. COLLINS, словарь по экономике, Санкт-Петербург, 1998.
8. **Газман В. Д.** “Финансовый лизинг”, Москва, 2003.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅԷԵՐ

www.cfcrus.ru
www.setcom.com
www.banks.am
www.leasing.ru
www.cba.am):
<http://www.armbanks.am>
www.acbaleasing.am
<http://www.finance.am>

РАЗВИТИЕ ЛИЗИНГОВЫХ ОПЕРАЦИЙ И ВОЗМОЖНОСТИ ИХ СОВЕРШЕНСТВОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Մ. Ն. ԵՐԴՆՅԱՆ
Ա. Գ. ՄԱԶՄԱՆՅԱՆ

В условиях рыночной экономики в сфере инвестиционной деятельности становится важным привлечение кредитных средств посредством финансовой аренды-лизинга, для получения оборудования. В работе рассмотрены возможности развития и совершенствования лизинговых операций в Республике Армения. В этом контексте лизинг как долгосрочный инвестиционный инструмент может способствовать повышению эффективности в сфере предпринимательской деятельности и обновлению производственной базы, что позволит создать предпосылки для развития малого и среднего бизнеса.

THE CHANCES OF DEVELOPMENT AND IMPROVEMENT OF LEASING TRANSACTIONS IN THE REPUBLIC OF ARMENIA

M. N. HERGNYAN
A. G. MAZMANIAN

In conditions of market economy and in the sphere of investments the involvement of credit means and financial leasing for getting equipments is highlighted in the article. The chances of development and improvement of leasing transactions in the Republic of Armenia are elucidated in the article. In this context leasing as a prospective investment tool may promote the increasing of business efficiency and the

modernization of manufacturing base in the sphere of production and services which will create preconditions for the development of small and medium business.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հ. Ս. ԶԱՔՈՅԱՆ

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳԴՀ պրոֆեսոր*

Ռ. Կ. ԱՍԱՏՐՅԱՆ

ԳԴՀ «ՀՏԿ» մասնագիտությամբ մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի

Ցանկացած պետության հասարակական, տնտեսական և քաղաքական կյանքում ապրանքադրամական հարաբերությունների առաջացումը և պետության գոյությունը այն հիմնական նախապայմաններն են, որոնց հիմքի վրա ձևավորվել են ֆինանսական հարաբերությունները: Ժամանակակից շուկայական տնտեսությունն էլ ավելի է ընդլայնում ֆինանսների գործողության շրջանակները, մեծացնում դրանց դերը: Դրան զուգահեռ՝ ամեն քայլափոխի բազմաթիվ անհատներ կամ կազմակերպությունների ներկայացուցիչներ առնչվում են ֆինանսական համակարգի ծառայությունների հետ: Այդ պատճառով ֆինանսների մասին նրանց ունեցած գիտելիքները պետք է գտնվեն բավարար մակարդակի վրա՝ հնարավորություն տալով ընդունել ավելի հիմնավորված որոշումներ շուկայական հարաբերությունների ներկայիս բարդ պայմաններում:

Վարչահրամայական տնտեսության փլուզումից և անկախության հռչակումից հետո Հայաստանը, գտնվելով տնտեսության անցումային շրջանում, զերծ չմնաց ֆինանսական շուկայի զարգացմանը վերաբերող խնդիրներից:

Խորհրդային տարիներին լայն տարածում ստացած դրամը «բարձի տակ» պահելու սովորությունը, «խնայդրամարկը»-ում ներդրված ավանդների հատուցման հետ կապված քաշքշուկներն ու անորոշությունը և անկախության առաջին տարիներին խաբված ավանդատուների կարգավիճակում հայտնվածների թվի ավելացումը նվազեցրին անկախ Հայաստանի ֆինանսական համակարգի նկատմամբ վստահությունը, որը մասնակիորեն վերականգնվեց նախ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» օրենքի (գործում է 2005թ-ից) և այլ իրավական ակտերի հիման վրա հիմնադրամ, ապա «Ֆինանսական հաշտարարի գրասենյակ» ստեղծելով:

Սակայն խնդիրը այսօր էլ չի կարելի լուծված համարել, քանի որ դեռևս մեկ օրում կարող է տեղի ունենալ ազգային դրամի փոխարժեքի կտրուկ տատանում (2009թ-ի մարտի 3-ին հայկական դրամի նկատմամբ ազատ փոխարկելի արտարժույթները թանկացան ավելի քան 20%-ով, իսկ դրան նախորդող օրերին